## ‹‹ԻՆԵԿՈԲԱՆԿ›› ՓԲԸ-Ի ՀԵՏ ԿՆՔՎԱԾ ‹‹ԵՐԵԽԱՅԻ ԾՆՆԴՅԱՆ ՄԻԱՆՎԱԳ ՆՊԱՍՏԻ ԱՆԿԱՆԽԻԿ ՎՃԱՐՄԱՆ, ՊԵՏԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԻ ԲԱՑՄԱՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ (ԸՆՏԱՆԵԿԱՆ ԴՐԱՄԱԳԼԽԻ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ) ՄԱՍԻՆ›› ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ԼՈՒԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք. Երևան 25 հունիս 2020 թվական

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2020 թվականի մարտի 12-ի N 284-Ն ու 287-Ն որոշումները՝ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը, ի դեմս Սոցիալական ապահովության ծառայության պետ Անի Ամիրշադյանի (հիմք՝ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի կողմից 30.03.2020 թվականի տրված թիվ Ն/ՍԱԾ/8605-2020 լիազորագիրը) (այսուհետ՝ Նախարարություն), և ‹‹Ինեկոբանկ›› ՓԲԸ-ը, ի դեմս գործադիր տնօրեն Արեն Նալթակյանի (այսուհետ՝ Բանկ) (միասին՝ Կողմեր), կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

1. **2020 թվականի հուլիսի 1-ից** լուծել Նախարարության (Սոցիալական ապահովության ծառայության) և Բանկի միջև կնքված ‹‹Երեխայի ծննդյան միանվագ նպաստի անկանխիկ վճարման, պետական աջակցության հաշվի բացման և սպասարկման (ընտանեկան դրամագլխի սպասարկման) մասին›› պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր) և դրա անբաժանելի մասը կազմող բոլոր համաձայնագրերը:

2. Պայմանագրի լուծելու օրվա դրությամբ դրանցով ստանձնած պարտավորությունները Բանկի կողմից պատշաճ կատարելու համար սահմանել հետևյալ ժամկետները՝

2.1. ‹‹Երեխայի ծննդյան միանվագ նպաստի անկանխիկ վճարման, պետական աջակցության հաշվի բացման և սպասարկման (ընտանեկան դրամագլխի սպասարկման) մասին›› պայմանագրի դեպքում՝ մինչև Բանկի կողմից Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի մարտի 6-ի N 275-Ն որոշմամբ հաստատված N 3 հավելվածի 4-րդ կետի 13-րդ ենթակետում նշված տեղեկատվությունը (2-րդ կետի 1.1-ին ենթակետում նշված պահանջը

չկատարած անձանց տվյալները) վերջին անգամ լիազոր մարմնին տրամադրելու ամիսը՝ ներառյալ, ՀՀ կառավարության 2020 թվականի մարտի 12-ի N 287 որոշման 3-րդ կետի 2-րդ ենթակետում նշված գումարի համար:

3. Սույն համաձայնագիրը ուժի մեջ է մտնում Կողմերի կողմից ստորագրման պահից:

4. Սույն Համաձայնագիրը կազմված է երկու (2) էջից, կնքվում է հայերեն լեզվով՝ երկու բնօրինակից, որոնք ունեն հավասար իրավաբանական ուժ, յուրաքանչյուր Կողմին տրվում է մեկական օրինակ:

## 5. ԿՈՂՄԵՐԻ ԳՏՆՎԵԼՈՒ ՎԱՅՐԵՐԸ, ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

| | |
|---|---|
| Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության սոցիալական ապահովության ծառայություն | ‹‹Ինեկոբանկ›› ՓԲԸ |
| Գտնվելու վայրը՝ ՀՀ, քաղ. Երևան, Նալբանդյան 13 | Գտնվելու վայրը՝ ՀՀ, ք. Երևան, Թումանյան 17 |
| Հեռ. 060-654-002<br>Էլ. փոստ info@ssa.am | Հեռ. 010-510-510<br>Էլ. փոստ inecobank@inecobank.am<br>ՀՎՀՀ 02518512 |
| **Սոցիալական ապահովության ծառայության պետ**<br>**Անի Ամիրշադյան** | **Գործադիր տնօրեն**<br>**Արեն Նալթակյան** |
| (ստորագրություն և կնիք) | (ստորագրություն և կնիք) |

## ‹‹ԻՆԵԿՈԲԱՆԿ›› ՓԲԸ-Ի ՀԵՏ ԿՆՔՎԱԾ ‹‹ԿԵՆՍԱԹՈՇԱԿՆԵՐԻ ՎՃԱՐՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՄԱՍԻՆ›› ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ԼՈՒԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք. Երևան 23 մայիսի 2020 թվական

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2020 թվականի մարտի 12-ի N 284-Ն ու 287-Ն որոշումները՝ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը, ի դեմս Սոցիալական ապահովության ծառայության պետ Անի Ամիրշադյանի (հիմք՝ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի կողմից 30.03.2020 թվականի տրված թիվ Ն/ՍԱԾ/8605-2020 լիազորագիրը) (այսուհետ՝ Նախարարություն), և ‹‹Ինեկոբանկ›› ՓԲԸ-ը, ի դեմս գործադիր տնօրեն Արեն Նալթակյանի (այսուհետ՝ Բանկ) (միասին՝ Կողմեր), կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

1. **2020 թվականի հուլիսի 1-ից** լուծել Նախարարության (Սոցիալական ապահովության ծառայության) և Բանկի միջև կնքված ‹‹Կենսաթոշակների վճարման ծառայությունների մատուցման մասին›› պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր) և դրա անբաժանելի մասը կազմող բոլոր համաձայնագրերը:

2. Պայմանագրի լուծելու օրվա դրությամբ դրանցով ստանձնած պարտավորությունները Բանկի կողմից պատշաճ կատարելու համար սահմանել հետևյալ ժամկետները՝

2.1.‹‹Կենսաթոշակների վճարման ծառայությունների մատուցման մասին›› պայմանագրի դեպքում՝ մինչև Բանկի կողմից Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի մայիսի 5-ի N 670-Ն որոշմամբ հաստատված N 2 հավելվածի 2.3.8-րդ ենթակետում նշված տեղեկատվության (1.2.2-րդ ենթակետում նշված պահանջը չկատարած անձանց տվյալները) վերջին անգամ լիազոր մարմնին տրամադրելու ամիսը՝ ներառյալ, ՀՀ կառավարության 2020 թվականի մարտի 12-ի N 287 որոշման 3-րդ կետի 5-10-րդ ենթակետերում նշված գումարների համար, **իսկ ՀՀ կառավարության 2020 թվականի մարտի 12-ի N 284 որոշման շրջանակներում՝** ժամկետը սահմանել 2020 թվականի հոկտեմբերի 1-ը՝ մինչև Բանկի կողմից Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի մայիսի 5-ի N 670-Ն որոշման N 2 հավելվածի 2.3.5-րդ ենթակետում նշված տեղեկատվությունը (1.2.2-րդ ենթակետում նշված պահանջը չկատարած անձանց տվյալները) վերջին անգամ լիազոր մարմնին տրամադրելու ամիսը ներառյալ:

3. Սույն համաձայնագիրը ուժի մեջ է մտնում Կողմերի կողմից ստորագրման պահից:

4. Սույն Համաձայնագիրը կազմված է երկու (2) էջից, կնքվում է հայերեն լեզվով՝ երկու բնօրինակից, որոնք ունեն հավասար իրավաբանական ուժ, յուրաքանչյուր Կողմին տրվում է մեկական օրինակ:

## 5. ԿՈՂՄԵՐԻ ԳՏՆՎԵԼՈՒ ՎԱՅՐԵՐԸ, ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

| | |
|---|---|
| Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության սոցիալական ապահովության ծառայություն | ‹‹Ինեկոբանկ›› ՓԲԸ |
| Գտնվելու վայրը՝ ՀՀ, քաղ. Երևան, Նալբանդյան 13 | Գտնվելու վայրը՝ ՀՀ, ք. Երևան, Թումանյան 17 |
| Հեռ. 060-654-002<br>Էլ. փոստ info@ssa.am | Հեռ. 010-510-510<br>Էլ. փոստ inecobank@inecobank.am<br>ՀՎՀՀ 02518512 |
| **Սոցիալական ապահովության ծառայության պետ**<br>**Անի Ամիրշադյան**<br>(ստորագրություն և կնիք) | **Գործադիր տնօրեն**<br>**Արեն Նալթակյան**<br>(ստորագրություն և կնիք) |